ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 3-4 (57-58)

ԵՐԵՎԱՆ 2022

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Ռ. Գևորգյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան **(գլխավոր խմբագիր)**,
Ա. Ա. Ավագյան, Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան,
Ա. Գ. Դոլուխանյան, Գ. Հ. Գյուլամիրյան, Լ. Մ. Խաչատրյան,
Վ. Լ. Կատվալյան, Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան,
Ա. Ա. Մակարյան, Է. Ս. Մկրտչյան,Ս. Պ. Մուրադյան,
Ա. Տագեսյան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Իտալիա),
Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Ա. Հ. Հարությունյան **(պատասխանատու քարտուղար և տեխնիկական խմբագիր)**

Գրանցման վկայական՝ 211.200.00182
Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.
Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել՝ համալսարանի հաշվեհամարին (151 000 230 84 80 100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փողոց 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)
Էլեկտրոնային փոստ՝ **hayagitakanhandes@gmail.com**
Կայքէջ՝ **www. hayagitakan-handes.com**

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ
lilit.avetisyan1981@mail.ru

ԳՐԱԲԱՐԻ ԱՆՎԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. գրաբար, կայուն կապակցություններ (ԿԿ), միագագաթ կապակցություններ, երկգագաթ կապակցություններ, գրաբարի անվանողական կայուն կապակցություններ, կայուն կապակցությունների կառուցատիպեր, բուհական ուսուցում, անվանողական կայուն կապակցությունների կառուցատիպերի ուսուցումը:

Ключевые слова и выражения: грабар, устойчивые сочетания (УС), одновершинные сочетания, двучленные сочетания, номинативные УС грабара, структурные типы УС, изучение в вузе, обучение структурных типов номинативных устойчивых сочетаний.

Key words and phrases*:* old Armenian, stable compounds (SC), nominative SC of old Armenian, unilateral compounds, binomial compounds, structural types of the SC, case study at the Institute, the study of the structural types of the nominative stable compounds.

Նախաբան

Կայուն կապակցությունները մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կամ առանց վերաիմաստավորման պատրաստի վերարտադրելի կառույցներ են: Որպես միջմակարդակային (բառիմաստային և քերականական-շարահյուսական) իրողություններ՝ կայուն կապակցությունները լինում են անվանողական և հաղորդակցական: Գրաբարի անվանողական կայուն կապակցություններում առանձնացվում են *միագագաթ* (նրանցում բացակայում է քերականորեն գերադաս բաղադրիչը) և *երկգագաթ* (նրանցում հանդես են գալիս երկու (և ավելի) լիիմաստ բաղադրիչներ) կառուցատիպեր, որոնք զգալի տեսակարար կշիռ ունեն հին հայերենում:

Սույն հոդվածում քննության են առնվում բուհում (բանասիրական ֆակուլտետում) գրաբարի անվանողական կայուն կապակցությունների կառուցատիպերի ուսուցման հարցերը՝ ըստ պրակտիկ գործողության, փոխներգործուն (ինտերակտիվ) և վերահսկող-գնահատող մեթոդների ու հնարների:

Բովանդակություն

Ընդհանրապես բառակապակցության կառուցվածք ունեցող կայուն կապակցություններն ըմբռնվում են որպես անվանողական, իսկ նախադասության ձևավորում ունեցողները՝ հաղորդակցական արժեքով միավորներ[1]:

Գրաբարի բուհական դասընթացի շրջանակներում անվանողական կայուն կապակցությունների կառուցատիպերի ուսուցման առումով արժևորում ենք թեմային վերաբերող *հարցերի, առաջադրանքների* և *վարժությունների* առկայությունը[2]: Առանձնակի նշանակություն ունեն զանազան գծագրական դասակարգիչները՝ *պրիզմա, Տ-աձև աղյուսակ, Վենի դիագրամ*[3]: Ուսանողների ինքնուրույն-անհատական աշխատանքներ[4] կատարելու հմտությունների մշակման հարցում արդյունավետ են գրաբարյան բնագրային հատվածների *արտահայտիչ* և *ուղղորդված ընթերցանությունը*[5], *աշխատանքը բառարաններով* և *համաբարբառներով*, ինչպես նաև *տեքստային աշխատանքի* կիրառումը, որոնց ընթացքում կայուն կապակցությունների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման դժվարին ճանապարհը դառնում է դյուրին ու հիմնավոր:

Անվանողական կայուն կապակցությունները հարաբերակցվում են բառաքերականական կարգերին՝ խոսքի մասերին[6], միաժամանակ նախադասության կառուցվածքային դիտվածքում հանդես են գալիս որպես նրա մեկ անդամ (*տէգ աչաց* = չար հայացք, *առն լինել (իմ)* = ամուսնանալ (կնոջ մասին), *ակն ի ճանապարհ* = ապարդյուն սպասելով և այլն):

Ըստ կառուցվածքային դիտվածքի՝ գրաբարի անվանողական կայուն կապակցությունները կարելի է քննարկել երկու հիմնական խմբերով՝

---

[1] Տե՛ս *Н. М. Шанский*, Фразеология современного русского языка, М., Изд-во “Высшая школа”, 1985, էջ 72:

[2] Հմմտ. *Э. Г. Азимов, А. Н. Щукин,* Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., Изд-во ИКАР, 2009, էջ 70, 322-323:

[3] *Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան*, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008, էջ 12, 69, 72-73:

[4] Հմմտ. *Г. К. Селевко,* Энциклопедия образовательных технологий, Том 1, М., Народное образование, 2005, էջ 232-236:

[5] *Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան*, նշվ. աշխ., էջ 28:

[6] Հին հայերենի ոչ հաղորդակցական կայուն կապակցությունները ձևաբանական դասակարգմամբ բաժանվում են հիմնականում *գոյականական, ածականական, բայական* և *մակբայական* խմբերի:

միագագաթ կամ *միաբևեռ* և *երկգագաթ* կամ *երկբևեռ* տեսակներով[7].

ա) միագագաթ (միաբևեռ) կայուն կապակցություններ. առ աչս (1. աչառությամբ, 2. ձևի համար), *ըստ կարգի* (կարգ ու կանոնով), *իբրև զշուշան* (սպիտակափայլ. շատ գեղեցիկ), *ոգւով չափ* (ամբողջ հոգով. սրտանց),

բ) երկգագաթ (երկբևեռ) կայուն կապակցություններ. մայր վանուց (մայրապետ), *մաքուր որպէս զլոյս* (1. խիստ մաքուր, 2. առաքինի), *ձայն շրջել* (ձայն հանել. խոսել), *բացաւ գլխով* (1. գլխաբաց, 2. անամոթաբար) և այլն:

Ուսանողները դասախոսի խորհրդատվությամբ կառուցում են *ուղղորդված պրիզմա,* որը միաժամանակ տրված մեկնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ հաստատելուն է միտված:

[7] Միագագաթ կապակցություններում բացակայում է քերականորեն գերադաս բաղադրիչը (տե՛ս *Խ. Գ. Բաղիկյան,* Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 260-263): Գրաբարյան այդ կարգի կառույցները ձևավորվում են խնդրով և տարբեր նախդիր-նախադրություններով: Երկգագաթ միավորներում ի հայտ են գալիս երկու (և ավելի) լիիմաստ բաղադրիչներ (հմմտ. *Լ. Մ. Խաչատրյան, Լ. Ն. Ավետիսյան,* Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Ե., «Զանգակ» հրատ., 2015, էջ 29-42):



Վարժությունների կատարումն ապահովում է տվյալ թեմայի վերաբերյալ գիտելիքների յուրացումը և ամրապնդումը:

1. Հետևյալ անվանողական կայուն կապակցությունները դասակարգել ըստ երկթև (Տ–ածև) աղյուսակի՝ առանձնացնելով միազգաթ և երկզգաթ կառուցատիպերը:

Որդի Աստուծոյ, ընդ բնաւ, դատել սրով, ըստ նմանութեան արագաթև արծուոյ, հարցանել կենօք, քան զհարսն, քան զփուշ ևս չար կտտել, վաղ քաջ, զմտօք զառանցեալ, անմխիթար մինչև ի մահ, նման յորդառատ անձրևի, յական թօթափել, կապարճս դարձուցանել, ընդ այգն, անխառն իբրև զօդ, արագ քան զմիտս, անհեղեղ անձամբ, յանց ըստ հրաման օրինադրին մերոյ, բարձրացուցանել զաղաղակ, զօրէն երկաթապինդ կապանօք, պապանձել որպէս համր դև, զերդ զապակի, ոտնհար լինել (իմ):

Անվանողական ԿԿ	
Միագագաթ կառուցատիպ	*Երկգագաթ կառուցատիպ*

2. Արտագրե՛ք գրաբար և աշխարհաբար համարժեք հետևյալ նախադասությունները, դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները՝ վերջիններս ենթարկելով ձևակազմական վերլուծության՝ Վենի դիագրամի միջոցով ուշադրություն դարձնելով լեզվական տարբեր գոյավիճակներում քննարկվող միավորների դրսևորած ընդհանրություններին և տարբերություններին:

1. Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով՝ ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ (Եղ., 200) = Բոլորը, միահամուռ երկնավոր նախանձով լցված, ամենևին պակաս չմնացին նրանցից, որոնք աշխարհ չէին մտել: 2. Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորթ և միս. այլ նոցա որպէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր (Եզն., 47) = Չէ՞ որ չարի ամեն ինչը վնասակար պետք է լինի՝ և՛ մորթին, և՛ միսը: Բայց, օրինակ, նրանց մորթին հագնում ենք, և չի վնասում, և եթե միսն էլ մեկի սիրտը վերցներ, և ուտեր, չէր վնասի: 3. Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն (ն. տ., 91) = Որովհետև հնարավոր չէ, որ մեկը լինելու սկիզբ առնի՝ առանց ուրիշից գոյացում ստանալու: 4. Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց (ն. տ., 310) = Կրոնավորը պարտավոր է արյան չափ հակառակվել մարմնական ցանկություններին:



Թեմային վերաբերող *առաջադրանքները* նպաստում են ուսումնասիրվող նյութի գործնական յուրացմանը, սովորողների վերլուծական մտածողության և ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը: Ընդսմին, *տեքստային աշխատանք* մեթոդը ենթադրում է թեմայի վերաբերյալ յուրացրած գիտելիքների կիրառում գործնականում:

1. ա) Արտահայտիչ ընթերցե՛ք և թարգմանե՛ք տրված բնագրային հատվածները:

բ) Դո՛ւրս գրեք կայուն կապակցությունները՝ առանձնացնելով դրանք ըստ միագագաթ և երկգագաթ կառուցատիպերի (նմուշ՝ իբրև զկեղն նռան – միագագաթ ԿԿ, *առնուլ յանձն* – երկգագաթ ԿԿ):

Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք, վարսք քո իբրև զերամակս այծից, որք երևեցան ի Գաղաադէ: Ատամունք քո իբրև զերամակս կտրելոց[1], որք ելանեն ի լուալեաց[2]. ամենեքեան երկուորիք են, և անորդի ոչ գոյ ի նոսա: Իբրև զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրև զկեղն նռան են այտք քո, իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո: ....Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, քոյր իմ հարսն, մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քոց[3] իբրև զհոտ կնդրկի (Երգ., Դ, էջ 703):

Եւ իբրև զայն ամենայն լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ[4]. քանզի օրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին, քանզի տկար էր յոսկերաց զօրութեամբ. սրտաթափ եղեալ զարհուրեցաւ[5], քանզի ոչ գիտէր զի՛նչ տացէ բանիցն պատասխանի: ....Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա[6]. հրաման ել ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ (Ագաթ., Դ, էջ 34, 36):

1. *Իբրև զերամակս կտրելոց* – խուզած (ոչխարների) հոտի նման:
2. *Ի լուալեաց* – լողարանից:
3. *Հոտ հանդերձից քոց* – քո զգեստների բույրը:
4. *Երկեաւ* – վախեցավ:
5. *Սրտաթափ եղեալ զարհուրեցաւ* – ահաբեկվելով զարհուրեց:
6. *Վասն նորա* – նրա մասին:

2. Գրաբարյան մատենագիրներից (ըստ նախընտրության) մեկ-երկուսի համաբարբառներից դուրս գրել անվանողական միագագաթ և երկգագաթ տասական

կայուն կապակցություններ՝ համապատասխան բնագրային օրինակներով հանդերձ:

Բուհական համակարգում (բանասիրական ֆակուլտետում) գրաբարի կայուն կապակցությունների կառուցատիպերի ուսուցումը տեքստային աշխատանքների ընթացքում ամփոփվում է *բանավոր հարցերով:* Այդօրինակ հարցադրումներն ունեն թեմայի յուրացման գործընթացը վերահսկող և գնահատող նշանակություն:

1. Որո՞նք են կայուն կապակցությունները: Ըստ հաղորդակցման գործընթացի հետ փոխհարաբերության՝ գրաբարի կայուն կապակցություններն ի՞նչ խմբերի են բաժանվում:

2. Որո՞նք են բառակապակցական կայուն կապակցությունների հիմնական կառուցատիպերը:

3. Ի՞նչ դեր ունեն գրաբարի կայուն կապակցությունները ձեր քերականական, ընդհանրապես լեզվառճական գիտելիքների ձեռքբերման և յուրացման հարցերում:

Վերջում իրականացվում է կատարված աշխատանքների քննարկում, արվում են վերլուծություններ և մեկնաբանություններ թե՛ դասավանդողի, թե՛ սովորողների կողմից: Ուսանողները կատարում են ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, այնուհետև գնահատվում դասախոսի կողմից:

Եզրակացություն

Անվանողական (բառակապակցական) կայուն կապակցությունները՝ որպես մասնակի կամ ամբողջական վերաիմաստավորումով կամ առանց վերաիմաստավորման պատրաստի վերարտադրելի կառույցներ, գրաբարում հանդես են գալիս միագագաթ կամ միաբևեռ և երկգագաթ կամ երկբևեռ կառուցատիպերով: Գրաբարի բուհական դասընթացում անվանողական կայուն կապակցությունների կառուցատիպերի ուսուցման առումով կարևոր են թեմային վերաբերող առաջադրանքները, վարժությունները և հարցումը: Գծագրական դասակարգիչները՝ պրիզմա, Տ-աձև աղյուսակ, Վենի դիագրամ, ապահովում են թեմայի փոխներգործուն ուսուցումը: Ինքնուրույն աշխատանքներ կատարելու հմտությունների մշակման, ուսուցման անհատականացման համար արժևորում ենք գրաբարյան բնագրային հատվածների արտահայտիչ և ուղղորդված ընթերցանությունը, աշխատանքը բառարաններով և համաբարբառներով, ինչպես նաև տեքստային աշխատանքի կիրառումը: Չպետք է անտեսել ուսանողների ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը, ինչպես նաև դասախոսի կողմից գնահատումը թեմայի ուսուցման և յուրացման գործընթացում:

Համառոտագրություններ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Երևան, 1983:

Եզն. – Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, Թիֆլիս, 1914: Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:

Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան), Երևան, 1957: Վարդանի և հայոց պատերազմի մասին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1994:

Երգ. – Երգ երգոց // Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց (Ամերիկեան ընկերութիւն Գրոց Սրբոց, Վիեննա, 1929):

Лилит Аветисян

Обучение структурных типов номинативных устойчивых сочетаний грабара в вузе

Резюме

Устойчивые сочетания (УС) представляют собой устойчивые, воспроизводимые в готовом виде и переинтерпретированные словосочетания. С точки зрения соотнесенности с актом коммуникации устойчивые сочетания древнеармянского языка (грабара) подразделяются на два больших класса – номинативные и коммуникативные. Достойны внимания особенно номинативные устойчивые сочетания, которые несомненно имеют большой удельный вес в грабаре. Среди номинативных устойчивых сочетаний древнеармянского языка выделяются одновершинные и двучленные сочетания.

По своим категориалньным значениям устойчивые сочетания системно объединяются соотнеся с той или иной часьтю речи. Среди номинативных устойчивых сочетаний грабара различаются субстантивные, адъективные, адвербальные и глагольные сочетания, которые обладают широкими номинативными возможностями.

В данной статье рассматриваются вопросы изучения структурных типов номинативных устойчивых сочетаний на факультетах филологической направленности высших учебных заведений. В настоящей статье представлен пример вузовского обучения структурных типов номинативных устойчивых сочетаний грабара. Предлагается практическое применение полученных студентами теоретических знаний, базирующееся

на таких методических приемах как Т-образная таблица, диаграмма Вена, призма, метод текстовой работы, выполнение словарной работы, заданий и упражнений и проведение опроса.

Lilit Avetisyan

The study of the structural types of the nominative stable compounds of old Armenian at the Institute

Summary

The stable compounds (SC) built on imagination are stable compounds, those components are linked. Due to the communication act stable compounds of old Armenian are divided into two big classes: nominative and communicative. They are interesting especially nominative stable compounds, which certainly are of considerable number in old Armenian. Among nominative stable compounds of old Armenian unilateral and binomial compounds are distinguished.

By their general meaning nominative stable compounds group correlating with this or that part of speech. Among nominative stable compounds of old Armenian substantival, adjectival, adverbial and verbal compounds are distinguished. They have wide nominative possibilities.

This article examines the questions of teaching of the structural types of the nominative stable compounds in the philological faculties of the university system. In this article we are presenting a case study of the structural types of the nominative stable compounds of old Armenian at the Institute. Recommended to apply students' acquired theoretical knowledge in practice according to the table with two columns, Venn diagram and prisma methodological approaches, text work method, dictionary work, question, as well as according to performing of exercises and tasks.

Խմբագրություն է ուղարկվել 06. 07. 2022 թ.

Հանձնարարվել է գրախոսության 21. 08. 2022 թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022 թ.